Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
առաջին խորհրդական



Զինված արդարությամբ

Երկրի վրա Աստծո մարգարեն՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, հայտարարել է. «Այսօր մենք բանակ ենք ստեղծել մեղքի, մոլության և չարի առավել մեծ բանակի առաջ, որ երբևէ կարող էր լինել մեր աչքի առաջ»:[1]

Արդյո՞ք դուք կզարմանաք, եթե իմանաք, որ Նախագահ Մոնսոնն այս բառերն ասել է 50 տարի առաջ: Եթե մենք կանգնած էինք չարիքի աննախադեպ մեծ բանակի առաջ այն ժամանակ, ապա որքան ավելի մեծ չարիք է մեզ սպառնում այսօր: Բավարար պատճառներ ունենալով, Տերը հայտարարել է մեր սերնդի մասին. «Ահա, թշնամին միավորվել է» (ՎԵՌ 38.12):

Պատերազմը, որին «մենք բոլորս զինվորագրված ենք»,[2] սկսվել է նախքան այս երկրի վրա մեր ծնվելը: Այն սկսվել էր նույնիսկ նախքան աշխարհի ստեղծումը: Այն սկսվել է շատ հազարամյակներ առաջ նախաերկրային թագավորությունում, որտեղ սատանան ապստամբեց և «փնտրեց կործանել մարդու կամքի ազատությունը» (Մովսես 4.3):

Սատանան պարտություն կրեց այդ պատերազմում և «վայր զցուեցաւ երկրի վերայ» (Հայտնություն 12.9), որտեղ նա այսօր շարունակում է իր պատերազմը: Այստեղ երկրի վրա «նա պատերազմում է Աստծո սրբերի հետ և շրջապատում է նրանց շուրջանակի» (ՎԵՌ 76.29) ստերով, խաբեությամբ և գայթակղություններով:

Նա պատերազմում է մարգարեների և առաքյալների դեմ: Նա պատերազմում է մաքրաբարոյության օրենքի և սուրբ ամուսնության դեմ: Նա պատերազմում է ընտանիքի և տաճարի դեմ: Նա պատերազմում է բոլոր բարի, սուրբ և սրբազան բաների դեմ:

Ինչպե՞ս մենք պետք է պայքարենք նման թշնամու դեմ: Ինչպե՞ս մենք պետք է պայքարենք չարի դեմ, որը կարծես ողողել է մեր աշխարհը: Ո՞րն է մեր սպառազինությունը: Ովքե՞ր են մեր դաշնակիցները:

Գառի զորությունը

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ սատանան մեզ վրա զորություն ունի այն չափով, որքանով մենք ենք թույլ տալիս նրան:[3]

Տեսնելով մեր օրերը՝ Նեփին տեսավ «Աստծո Գառի զորությունը, որ այն իջավ Գառի եկեղեցու սրբերի վրա և Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա, որոնք ցրված էին ողջ երկրի երեսին. և *նրանք զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով*» (1 Նեփի 14.14, շեղագրերն ավելացված են):

Ինչպե՞ս ենք մենք զինվում արդարությամբ և զորությամբ: Մենք սուրբ ենք պահում կիրակին և պատվում ենք քահանայությունը: Մենք կապում և պահում ենք սուրբ ուխտեր, աշխատում ենք մեր ընտանեկան պատմության վրա և այցելում ենք տաճար: Մենք շարունակ փորձում ենք ապաշխարել և աղերսել Տիրոջը «գործի դնել Քրիստոսի քավիչ արյունը, որպեսզի մենք

կարողանանք ներում ստանալ մեր մեղքերից» (Մոսիա 4.2)։ Մենք աղոթում ենք, ծառայում, վկայում և հավատ գործադրում առ Հիսուս Քրիստոսը։

Մենք նաև զինվում ենք արդարությամբ և զորությամբ, երբ «շարունակ [մեր] մտքում զանձում ենք կյանքի խոսքերը» (ՎևՈւ 84.85)։ Մենք զանձում ենք այդ խոսքերը, ընկղմվելով սուրբ գրքերի և Տիրոջ ընտրյալ ծառաների խոսքերի մեջ, ովքեր կկիսվեն Նրա կամքով, մտքով և խոսքով (տես ՎևՈւ 68.4) հաջորդ ամսվա գերագույն համաժողովի ընթացքում։

Չարի դեմ պայքարում մենք պետք է միշտ հիշենք, որ վարագույրի երկու կողմերից էլ մեզ աջակցում են։ Մեր դաշնակիցներն են Աստված՝ Հավերժական Հայրը, Տեր Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին։

Մեր դաշնակիցների շարքում են նաև երկնքի անտեսանելի զորքերը։ «Մի վախենար,- վախեցած երիտասարդին ասաց Եղիսեն, երբ նրանք կանգնած էին չարի բանակի առջև,- որովհետեւ մեզ հետ եղողները շատ են քան թե նորանց հետ եղողները» (տես Դ Թագավորաց 6.15–16)։

Մենք չպետք է վախենանք։ Աստված սիրում է Իր Սրբերին։ Նա երբեք մեզ չի լքի։

Ես գիտեմ, որ Աստված, ի պատասխան աղոթքի, կատարեց իմ աղաչանքը՝ ազատելով ինձ չարից։ Ես վկայում եմ, որ Հայր Աստծո, աշխարհի Փրկիչի և Սուրբ Հոգու օգնությամբ մենք կարող ենք վստահ լինել, որ մեզ կտրվի ավելի քան բավարար զորություն՝ դիմադրելու ամեն չար ուժի, որին կհանդիպենք։

Թող մենք միշտ զինված լինենք արդարությամբ, որպեսզի կարողանանք համոզված լինել, որ ի վերջո հասնելու ենք հաղթանակի։

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, “Correlation Brings Blessings,” *Relief Society Magazine,* Apr. 1967, 247.
2. “We Are All Enlisted,” *Hymns,* no. 250.
3. Տես *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 227։

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Այրինգը հիշեցնում է մեզ, որ մենք պատերազմ ենք մղում սատանայի դեմ։ Դուք կարող եք սկսել, երգելով «Բոլորս զինվորագրված ենք» օրհներգը (*Hymns,* no. 250) նրանց հետ, ում ուսուցանում եք։ Ապա կարող եք հրավիրել նրանց կիսվել, թե ինչպես են պաշտպանվել արդարության միջոցով և հնարամիտ ուղիներ գտել իրենց ընտանիքներին սատանայից պաշտպանելու համար, ինչպես օրինակ օգտակար հաղորդումներ ընտրելը, ընտանեկան խորհուրդ անցկացնելը կամ ամեն շաբաթ տանը ընտանեկան երեկոներ կազմակերպելը։ Կարող եք հրավիրել նրանց աղոթքով խորհել, թե ինչպես կարող են ամրացնել իրենց ընտանիքները և խրախուսեք նրանց պլանավորել, թե ինչպես իրականացնել իրենց գաղափարները։

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Ես արդեն որոշում էի կայացրել

Մեդիսոն Թոմսոն

Մի անգամ Երիտասարդ Կանանց դասարանում ես շատ արժեքավոր դաս սովորեցի սեռական մաքրության մասին, թեմա, որը երիտասարդներից շատերին ստիպեց ցնցվել իրենց տեղերում։ Ես չեմ հիշում ամեն բան, որ սովորեցի այդ դասի ժամանակ, բայց ես հիշում եմ, թե ինչպես էր իմ ուսուցիչը խոսում իր անձնական չափանիշներից մեկի մասին՝ միշտ պահպանել սեռական մաքրությունը։ Նրա խոսքերը մնացին իմ հիշողության մեջ, և այդ ժամանակ ես լուրջ որոշում կայացրեցի որդեգրել այն որպես իմ անձնական արժեքներից մեկը։

Մի օր, երբ ես տուն էի վերադառնում սպորտային միջոցառումից, ավտոբուսում մեկը մի խաղ սկսեց։ Ձանձրույթից այլ երեխաների հետ միասին խաղին միացա նաև ես։ Երբ եկավ իմ հերթը, ես պետք է անեի մի բան, ինչը գիտեի, որ սխալ էր։ Սա կարող էր դժվար որոշում լինել ինձ համար, սակայն ես մտաբերեցի Երիտասարդ Կանանց իմ ուսուցչի խոսքերը և ընտրությունը հեշտացավ։ Ես արագ հրաժարվեցի։ Ես արդեն գիտեի, թե ինչ պետք է անեի նման իրավիճակում։

Ես գիտեմ, որ եթե մենք գնանք եկեղեցի և կիրառենք այն ամենը, ինչ սովորում ենք այնտեղ, մենք կօրհնվենք ավելի մեծ հոգևոր ուժով ու պաշտպանված կլինենք աշխարհի գայթակղություններից։

Հեղինակն ապրում է Յուտայում (ԱՄՆ)։

ԵՐԵԽԱՆԵՐ

Հագեք ձեր սպառազինությունը

Այսօր աշխարհում շատ վատ բաներ կան: Ավետարանը նման է վահանի, որը պաշտպանում է մեզ: Կարդացեք 10 կետերը, որ Նախագահ Այրինգը խրախուսում է մեզ անել՝ մեզ պաշտպանելու համար: Ապա նկարեք և գունավորեք ձեր իսկ վահանը:

1. Սուրբ պահեք Հանգստության օրը:
2. Պատվեք քահանայությունը:
3. Ուխտեր կապեք և պահեք դրանք:
4. Ընտանեկան պատմության աշխատանքներ կատարեք:
5. Գնացեք տաճար:
6. Ապաշխարեք:
7. Աղոթեք:
8. Ծառայեք ուրիշներին:
9. Կիսվեք ձեր վկայությամբ:
10. Կարդացեք սուրբ գրքերը:

© 2017 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, March 2017*-ի թարգմանությունը: Armenian. 97923 201

Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հնարավորություն տվող զորությունը

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ոգեշնչում փնտրեք, թե ինչով կարող եք կիսվել: Ստիպիրող Միության նպատակը հասկանալն ինչպե՞ս է պատրաստում Աստծո դուստրերին հավերժական կյանքի օրհնությունների համար:

Հավատ, ընտանիք, սփոփանք

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպպեցիս 4.13): «Թեև բոլորս ունենք թուլություններ, մենք կարող ենք դրանք հաղթահարել»,- ասել է Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը: «Իրոք, դա Աստծո շնորհով է, որ եթե մենք խոնարհեցնենք մեզ և հավատք ունենանք, թույլ կողմերը կդառնան ուժեղ»:[1]

Վարդապետություն և Ուխտերում մեր Փրկիչն ասում է. «Ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ» (ՎևՈւ 84.88):

«Նեփին օրինակ է մեկի, ով գիտեր, հասկանում էր և ապավինում էր Փրկիչի հնարավորություն տվող զորությանը»,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը: «Նեփիի եղբայրները կապեցին նրան պարաններով և որոշեցին կործանել նրան: Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք Նեփիի աղոթքին. «Ով Տեր, համաձայն իմ հավատքի, որը քո հանդեպ է, ազատիր ինձ իմ եղբայրների ձեռքից. այո, *տուր ինձ այնքան ուժ, որ կարողանամ կտրել այս կապերը,* որոնցով ես կապված եմ» (1 Նեփի 7.17, շեշտադրումն ավելացված է):

. . . Նեփին չաղոթեց, որ իր պայմանները փոխվեին: Դրա փոխարեն նա աղոթեց ուժի համար, որ փոխեր իր պայմանները: Եվ ես կարծում եմ, որ նա այդպես աղոթեց հենց այն պատճառով, որ գիտեր, հասկանում էր և զգացել էր Քավության հնարավորություն տվող զորությունը:

Ես չեմ կարծում, որ պարանները, որոնցով կապված էր Նեփին, ուղղակի հրաշքով ընկան նրա ձեռքերից ու դաստակներից: Ես կարծում եմ, որ նա օրհնվեց հաստատակամությամբ և անձնական ուժով իր բնատուր կարողությունից առավել, որ նա այնուհետև «Տիրոջ ուժով» (Մոսիա 9.17) աշխատեց և ոլորեց ու քաշքշեց պարանները, և, ի վերջո, բառիս բուն իմաստով, հնարավորություն ունեցավ քանդելու կապերը»:[2]

Լրացուցիչ սուրբ գրություններ և տեղեկություն

Եսայիա 41.10, Եթեր 12.27, *reliefsociety.lds.org*

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Շնորհի պարգևը», *Լիահոնա,* մայիս 2015, 108:
2. David A. Bednar, “Strength beyond Our Own,” *New Era,* Mar. 2015, 4.

Խորհեք այս մասին

Ինչպե՞ս կարող են Հիսուս Քրիստոսի հնարավորություն տվող զորությունը և Նրա քավող զոհաբերությունն օգնել մեզ, որ մեր թուլությունները դառնան ուժեղ կողմեր:

© 2017 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *Visiting Teaching Message, March 2017*-ի թարգմանությունը: Armenian. 97923 201